

ասոր համար շատ զօրաւոր պատճառ մը  
չեմ գտներ: Ընդհակառակը, ինչպէս կը  
տեսնուի, իր եղբօրորդին արդէն իր հրա-  
ժարումը և մեկնումը Կ. Պոլիսէն 1609ին  
կը նշանակէ: Իսկ Յովհաննէս Խուլի 1610ին  
պատրիարք դարձած ըլլալը անժխտելի է  
(Յոսի Կենեքիի Զեւարաց, էջ 685):

## Ը.

ԿԵՍԱՐԱՅԻ ԱՅՅԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՆԱՊԱՏՆԵՐԸ,  
ՍԻՆԱ, ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՒ ԱՄԻԹ

## Ե Ի

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՐՏՔԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ  
ԻՐ ԶԱՆՔԵՐԸ  
(1609—1611)

Գրիգոր Կեսարացի 1609ին կամովին  
կամ ակամայ իր պատրիարքական պաշ-  
տօնը ձգելէն յետոյ այս անգամ Կեսարիա  
չի դառնար այլ «ի ՌՄԸ (= 1609) թուին,  
նաեւայ ի Բիզանդիայե յԵգիպտոս, եղեւայ ի  
շեառն Սիևս, ընդ իւր ունեղոյ զՄովսէս վրդն. ,  
սուեւայ նենս զաւագան, որ եւ յետոյ եղեւ կա-  
թողիկոս ի Սք. Էջմիածին եւ կասարեւայ զուխսս  
իւրեանց, յասուածախօս շեռնեկն դարձան ակի  
Համիր» (Յալի-Ք 42. Կեսարացի):